

Հավելված 1

«Էներգո ինվեստ հոլդինգ» ՓԲԸ տնօրենների խորհրդի
2018 թ.-ի փետրվարի 15-ի № 47 արձանագրության

Приложение 1

К протоколу Совета директоров ЗАО “Энерго
инвест холдинг” от 15-го февраля 2018 г. № 47

«ԷՆԵՐԳՈ ԻՆՎԵՍՏ ՀՈԼԴԻՆԳ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

“ЭНЕРГО ИНВЕСТ ХОЛДИНГ”
ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՎԱԾ ԳՆՈՒՄՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**

ПОЛОЖЕНИЕ

**О ПОРЯДКЕ ПРОВЕДЕНИЯ РЕГЛАМЕНТИРОВАННЫХ ЗАКУ-
ПОК ТОВАРОВ, РАБОТ, УСЛУГ**

ԲՈՎԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Ընդհանուր դրույթներ	3
1. Տերմիններ և սահմանումներ	3
2. Կանոնադրության նպատակը և գործողության ոլորտը	4
3. Նորմատիվ հղումներ	5
4. Գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորման չափանիշները	5
5. Գնման առարկայի բնութագրերը	6
6. Գնման ընթացակարգի արձանագրությունը և հաշվետվությունները	7
7. Գնման գործընթացի պատասխանատուները	8
8. Գնում կատարելու ընթացակարգերը և կիրառման պայմանները	10
II. Մեկ անձից գնումներ	10
9. Կիրառման պայմանները	10
III. Գնանշման հարցում	11
10. Կիրառման պայմանները	12
IV. Մրցակցային բանակցություններ	12
11. Ընդհանուր դրույթներ	12
V. Մրցութ	16
12. Մրցութի անցկացման կարգը	16
13. Գնման գործընթացի նախապատրաստում	19
14. Հանձնաժողով	21
15. Մրցութային փաստաթղթերի բովանդակությունը	24
16. Անցկացման կարգը	32
17. Հայտերի ներկայացում	34
18. Հայտերի բացումը	35
19. Հայտերի գնահատում	39
20. Պայմանագրի կնքում	41
VI. Չկայացած գնումներ	43
21. Ընդհանուր դրույթներ	43
VII. Գնումների գործընթացի բողոքարկումը	43
22. Ընդհանուր դրույթներ	43

СОДЕРЖАНИЕ

I. Общие положения	3
1. Термины и определения	3
2. Цель и сфера действия Положения	4
3. Нормативные ссылки	5
4. Право на участие в закупках и критерии квалификации	5
5. Характеристика предмета закупки	6
6. Протокол процедуры закупки и отчетность	7
7. Ответственные за процесс закупки	8
8. Процедуры осуществления закупки и условия применения	10
II. Закупки у одного лица	10
9. Условия применения	10
III. Запрос котировки	11
10. Условия применения	12
IV. Конкурентные переговоры	112
11. Общие положения	112
V. Конкурс	16
12. Порядок проведения закупок	16
13. Подготовка процесса закупки	19
14. Комиссия	21
15. Содержание конкурсной документации	24
16. Порядок проведения	32
17. Представление заявок	34
18. Вскрытие заявок	35
19. Оценка заявок	39
20. Заключение договора	41
VI. Несостоявшейся закупки	43
21. Общие положения	43
VII. Обжалование процесса закупок	43
22. Общие положения	43

I. Ընդհանուր դրույթներ

1. Տերմիններ և սահմանումներ

- 1.1. **գնման առարկա**՝ գնվող ապրանք, աշխատանք կամ ծառայություն.
- 1.2. **գնման առարկայի բնութագիր**՝ գնման առարկայի հատկանիշներ, դրանց ձևաբերման և վճարման պայմաններ.
- 1.3. **գնման գին**՝ ապրանքը, աշխատանքը, ծառայությունը ձևաբերելու համար սահմանված կարգով հաշվարկված նախահաշվային գին.
- 1.4. **գնման գործընթաց**՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը.
- 1.5. **գնում**՝ պատվիրատուի հատուցմամբ՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու միջոցով բոլոր տեսակի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում.
- 1.6. **գնումների բազային միավոր**՝ մեկ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ.
- 1.7. **էլեկտրոնային միջոցներ**՝ մալուխային, ռադիո, օպտիկական միջոցներով կամ էլեկտրամագնիսական այլ միջոցներով փոխանցված, տեղափոխված և ստացված տվյալների մշակման ու պահպանման, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով գնման ընթացակարգերի կազմակերպման համար անհրաժեշտ էլեկտրոնային, այդ թվում՝ ծրագրային և ապարատային միջոցներ.
- 1.8. **ընտրված մասնակից**՝ մասնակից (մասնակիցներ), որին (որոնց) պատվիրատուն առաջարկում է կնքել պայմանագիր.
- 1.9. **լիազորված մարմին**՝ պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության պետական մարմին.
- 1.10. **հատուկ կամ բացառիկ իրավունք**՝ իրավունք, որը բխում է իրավական կամ վարչական ակտով իրավասու մարմնի տրամադրած իրավասություններից, որի նպատակն է որոշակի գործունեության իրականացման իրավունքը (ներառյալ՝ հանրային ծառայությունների ոլորտում) վերապահել մեկ կամ սահմանափակ թվով կազմակերպությունների, և որով էապես սահմանափակվում է նման գործունեություն իրականացնելու այլ

I. Общие положения

1. Термины и определения

- 1.1. **предмет закупки** - закупаемый товар, работа или услуга;
- 1.2. **характеристика предмета закупки** - свойства предмета закупки, условия его приобретения и оплаты;
- 1.3. **закупочная цена** – сметная цена приобретения товара, работы, услуги, исчисленная в установленном порядке.
- 1.4. **процесс закупки** - совокупность действий по реализации процедур, прав и обязанностей, предусмотренных в целях произведения закупки законодательством Республики Армения о закупках, включая планирование закупок, утверждение характеристики предмета закупки, выполнение договора и управление;
- 1.5. **закупка** – с возмещением заказчика приобретение всех видов товаров, работ и услуг посредством заключения договора с отобраным участником;
- 1.6. **базовая единица закупок** - один миллион драмов Республики Армения;
- 1.7. **электронные средства** - электронные, в том числе программные и аппаратные средства, необходимые в целях обработки и хранения данных, переданных, перемещенных и полученных посредством кабельных, радио, оптических средств или других электромагнитных средств;
- 1.8. **отобранный участник** - участник (участники), которому (которым) заказчик предлагает заключить договор;
- 1.9. **уполномоченный орган** - государственный орган исполнительной власти Республики Армения, разрабатывающий и осуществляющий политику Правительства Республики Армения в области управления государственными финансами;
- 1.10. **особое или исключительное право** - право, которое вытекает из правомочий, предоставленных компетентным органом правовым или административным актом, целью которого является отведение права на осуществление определенной деятельности (включая в сфере общественных услуг) одной организации или ограниченному числу организаций и которым существенным образом ограничивается возможность других организаций на

- կազմակերպությունների հնարավորությունը.
- 1.11. **հայտ**՝ հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկ.
 - 1.12. **հայտի ապահովում**՝ մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Մասնակիցը վճարում է հայտի ապահովումը, եթե նա՝
 - հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու հրավերին.
 - խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
 - հայտերի բացումից հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:
 - 1.13. **Հանձնաժողով**՝ պատվիրատուի ղեկավարի հրամանով ձևավորվող գնահատող հանձնաժողով
 - 1.14. **հրավեր**՝ պայմանագիր կնքելու նպատակով պատվիրատուի կողմից մասնակցին առաջարկվող պայմաններ.
 - 1.15. **մասնակից**՝ պատվիրատուի հետ պայմանագիր կնքելու նպատակով գնումների գործընթացին մասնակցող անձ.
 - 1.16. **պայմանագիր**՝ գնում կատարելու նպատակով պատվիրատուի կողմից կնքվող գրավոր գործարք.
 - 1.17. **պայմանագրի ապահովում**՝ սույն Լանոնադրությանը նախատեսված դեպքերում ընտրված մասնակցի կողմից պայմանագրով ստանձնվող պարտավորությունների կատարումն ապահովող միջոց.
 - 1.18. **պատվիրատու**՝ «Էներգո ինվեստ հոլդինգ» փակ բաժնետիրական ընկերություն:
 - 1.19. **Օրենք**՝ Գնումների մասին ՀՀ օրենքը:

2. Լանոնադրության նպատակը և գործողության ոլորտը

- 2.1. Սույն Լանոնադրության նպատակն է Պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների տնտեսող, արդյունավետ ու օգտավետ ձեռքբերման իրականացումը՝ համարժեք հատուցմամբ:
- 2.2. Պատվիրատուն իր նպատակների իրականացման գործընթացում հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝
 - 2.2.1. գնման գործընթացի կազմակերպում՝ միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ

- осуществление такой деятельности.
- 1.11. **заявка** - предложение, представляемое участником на основании приглашения;
 - 1.12. **обеспечение заявки** - средство, обеспечивающее выполнение принятых участником обязательств по заявке, размер которого равен до пяти процентов от предлагаемой по заявке цены. Участник оплачивает обеспечение заявки, если он՝
 - объявлен отобранным участником, но отказывается или лишается права заключать договор,
 - нарушил обязательство, принятое в рамках процесса закупок, что привело к прекращению дальнейшего участия данного участника в процессе,
 - отказался от дальнейшего участия в процессе закупки после вскрытия заявок
 - 1.13. **Комиссия** – формируемая приказом руководителя оценочная комиссия
 - 1.14. **приглашение** – условия, предлагаемые участнику заказчиком в целях заключения договора;
 - 1.15. **участник** – лицо, участвующее в процессе закупок в целях заключения договора с заказчиком;
 - 1.16. **договор** – письменная сделка, заключаемая заказчиком в целях произведения закупки;
 - 1.17. **обеспечение договора** – средство, обеспечивающее выполнение принимаемых отобранным участником обязательств по договору в случаях, предусмотренных настоящим Положением;
 - 1.18. **заказчик** – Закрытое акционерное общество «Энерго инвест холдинг»
 - 1.19. **Закон** – Закон РА О закупках

2. Цель и сфера действия Положения

- 2.1. Целью настоящего Положения является экономное, эффективное и полезное осуществление приобретения товаров, работ и услуг, необходимых для выполнения отведенных Заказчику полномочий с равноценным возмещением.
- 2.2. В процессе реализации своих целей Заказчик основывается на следующих принципах:
 - 2.2.1. организация процесса закупки по унифицированным правилам на основе конкурентности, прозрачности, публичности и

- խորական հիմունքներով.
- 2.2.2. պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.
- 2.2.3. ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական, իրավաբանական կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն.
- 2.3. Եթե ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերում սահմանվում են այլ նորմեր, քան նշված են սույն կանոնադրությունում, ապա կիրառվում են այդ նորմերը.

3. Նորմատիվ հղումներ

Գնումների իրականացման գործընթացում Ընկերությունը դեկավարվում է.

- 3.1. Օրենքով,
- 3.2. Այլ նորմատիվ իրավական ակտերով:
4. **Գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորման չափանիշները**
- 4.1. Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին:
- 4.2. Չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝
- 4.2.1. խորական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.
- 4.2.2. համարժեք չեն՝ ուղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:
- 4.3. Գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝
- 4.3.1. որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ,
- 4.3.2. որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցա-

отсутствия дискриминации;

- 2.2.2. в целях заключения договора расширение круга участников и стимулирование между ними конкуренции;
- 2.2.3. равноправие участия в процессе закупок для любого лица, независимо от того обстоятельства, что оно является иностранным физическим, юридическим лицом либо лицом без гражданства.
- 2.3. Если ратифицированными со стороны РА международными договорами устанавливаются иные нормы, чем указанные в настоящем Положении, то применяются эти нормы.

3. Нормативные ссылки

В процессе осуществления закупок Общество руководствуется:

- 3.1. Законом,
- 3.2. Иными нормативно-правовыми актами.
4. **Право на участие в закупках и критерии квалификации**
- 4.1. Участник должен отвечать квалификационным критериям, установленным приглашением.
- 4.2. Не могут устанавливаться такие критерии, связанные с правом участия в закупках и квалификацией участника, которые:
- 4.2.1. являются дискриминационными и ограничивают конкуренцию, необоснованно усложняют или упрощают возможное участие в процессе закупки;
- 4.2.2. не являются равноценными – непосредственно не вытекают из необходимости выполнения обязательств, предусмотренных договором.
- 4.3. Право участия в процедурах закупок не имеют лица:
- 4.3.1. которые по состоянию на день подачи заявки признаны банкротами в судебном порядке;
- 4.3.2. которые или представитель исполнительного органа которых в течение трех лет, предшествующих дню подачи заявки, был осужден за финансирование терроризма, эксплуатацию ребенка или за преступление, включающее трафикинг человека, за создание преступного сообщества или участие в нем, за получение взятки, дачу взятки или посредничество в даче взятки и преступления, направленные против предусмотренной законом экономической деятельности, за исключением случаев, когда

գործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

4.3.3. որոնց վերաբերյալ հայտը ներկայացվելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում առկա է օրենքով սահմանված կարգով կայացված անբողոքարկելի վարչական ակտ՝ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար,

4.3.4. որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են Համաշխարհային բանկի և (կամ) Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,

4.3.5. որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

a. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է այլ պատվիրատուների կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

b. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

c. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Սույն կետում նշված ցուցակը, այդ թվում՝ բաժանումներն, հրապարակում է լիազորված մարմինը:

5. Գնման առարկայի բնութագրերը

5.1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձևեր բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձևերբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

5.2. Գնման առարկայի բնութագրերը՝

5.2.1. պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովելն հնարավոր մասնակիցների համար,

судимость снята или погашена в установленном законом порядке;

4.3.3. в отношении которых в течение одного года, предшествующего дню подачи заявки, имеется вынесенный в установленном законом порядке неоспариваемый административный акт за антиконкурентное соглашение или злоупотребление доминирующим положением в сфере закупок;

4.3.4. которые по состоянию на день подачи заявки включены в список участников, не имеющих право участия в процессе закупок, опубликованный Всемирным банком и (или) согласно законодательству о закупках стран, являющихся членами Евразийского экономического сообщества;

4.3.5. которые по состоянию на день подачи заявки включены в список участников, не имеющих право участия в процессе закупок. Участник включается в указанный список, если:

a. нарушил обязательства, предусмотренные договором или принятые в рамках процесса закупки, что привело к одностороннему расторжению договора иными заказчиками или прекращению дальнейшего участия данного участника в процессе закупки,

b. в качестве отобранного участника отказался от заключения договора,

c. отказался от дальнейшего участия в процессе закупки после вскрытия заявки.

Список, указанный в настоящем пункте, в том числе на русском языке, публикуется уполномоченный орган.

5. Характеристика предмета закупки

5.1. Характеристики предмета закупки должны полностью и четко описывать свойства приобретаемых товара, работы или услуги, условия их приобретения и оплаты, исключая альтернативный комментарий.

5.2. Характеристики предмета закупки:

5.2.1. должны обеспечивать равные конкурентные условия для возможных участников;

- 5.2.2. չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը,
- 5.2.3. պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը,
- 5.2.4. ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:
- 5.3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձևեր բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:
- 5.4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառնության (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել գնման առարկան:
- 5.5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:
- 6. Գնման ընթացակարգի արձանագրությունը և հաշվետվությունները**
- 6.1. Եթե գնման գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա պայմանագիրը կնքվելուն կամ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն կազմում է գնման ընթացակարգի արձանագրություն: Գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համար
- 5.2.2. не должны приводить к возникновению необоснованных препятствий для конкуренции в процессе закупок;
- 5.2.3. должны быть объективно обоснованными и равноценными той потребности, в целях удовлетворения которой производится данная закупка;
- 5.2.4. включают полное и равноценное описание спецификации, технических данных предмета закупки, а в случае работ – также объемной сметы, графика и других неценовых условий работ.0
- 5.3. Исходя из особенностей предмета закупки их признаки по возможности включают четкое описание условий, относящихся к качеству, стандарту, безопасности, условным знакам, терминологии, упаковке, разгрузке, размеру, проектам приобретаемых товара, работы или услуги, а также к другим свойствам предмета закупки на основании международных стандартов и действующих в Республике Армения нормативно-технических документов, стандартов, а при их отсутствии – на основании временных технических условий.
- 5.4. Свойства предмета закупки могут устанавливаться также в качестве исполнительных или функциональных описаний, которые должны быть представлены с достаточной точностью, предоставив участникам и заказчику возможность точно воспринять предмет закупки.
- 5.5. Свойства предмета закупки не должны содержать требование в отношении какого-либо торгового знака, фирменного наименования, лицензии, эскиза или модели, страны или конкретного источника происхождения либо производителя или ссылку на них, за исключением случаев, когда характеристика предмета закупки без них невозможна. В случае использования ссылок характеристика свойств должна содержать слова «или равноценный».
- 6. Протокол процедуры закупки и отчетность**
- 6.1. Если цена закупки превышает базовую единицу закупок, то заказчик в течение трех рабочих дней, следующих за заключением договора или объявлением процедуры закупки несостоявшейся, составляет протокол процедуры закупки. Протокол процедуры закупки в соответствии с формой закупки содержит:

պատասխան պարունակում է՝	
6.1.1. պատվիրատուի անվանումը, գտնվելու վայրը,	6.1.1. наименование, место нахождения заказчика;
6.1.2. գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրության հիմնավորումը,	6.1.2. необходимость закупки и обоснование выбора формы закупки;
6.1.3. հրավերը և դրանում կատարված փոփոխությունները,	6.1.3. приглашение и внесенные в него изменения;
6.1.4. գնման վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումները,	6.1.4. полученные запросы и представленные разъяснения по закупке;
6.1.5. հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անունը, ազգանունը/ անվանումը, գտնվելու կամ բնակության վայրը, կապի միջոցները,	6.1.5. данные участников, подавших заявки, - имя, фамилия/наименование, место нахождения или жительства, средства связи;
6.1.6. հայտերով ներկայացված գները,	6.1.6. цены, представленные заявками;
6.1.7. հայտերի գնահատման կարգը և դրանց գնահատման արդյունքները,	6.1.7. порядок оценки заявок и результаты их оценки;
6.1.8. հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը,	6.1.8. в случае отклонения заявки – его обоснование;
6.1.9. պայմանագիրը, իսկ գնման գործընթացի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում՝ դրա հիմնավորումը,	6.1.9. договор, а в случае незаключения договора в результате процесса закупки – его обоснование;
6.1.10. գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը,	6.1.10. в случае выявления незаконных действий в рамках процесса закупки – их краткое описание и краткое описание предпринятых в связи с этим действий;
6.1.11. գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները,	6.1.11. представленные по процессу закупки жалобы и вынесенные по ним решения;
6.1.12. այլ անհրաժեշտ տեղեկություններ:	6.1.12. другие необходимые сведения.
6.2. Եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը, ապա պատվիրատուն ապահովում է գնման նպատակով կատարված գործողությունների և դրանց հիմքերի մասին համապատասխան փաստաթղթերի (կամ էլեկտրոնային փաստաթղթերի) առկայությունը և դրանց պահպանումը:	6.2. Если закупочная цена не превышает базовую единицу закупок, то заказчик обеспечивает наличие и хранение соответствующей документации (или электронной документации) о действиях, совершенных в целях закупки, и их основаниях.
7. Գնման գործընթացի պատասխանատուները	7. Ответственные за процесс закупки
7.1. Յուրաքանչյուր գնման գործընթացի համար պատասխանատու են պատվիրատուի ղեկավարը, ինչպես նաև իրենց վերապահված իրավասությունների մասով՝	7.1. За каждый процесс закупки ответственны руководитель заказчика, а также по части возложенных на них полномочий:
7.1.1. գնումները համակարգողը,	7.1.1. координатор закупок,
7.1.2. պատասխանատու ստորաբաժանումը,	7.1.2. ответственное подразделение,
7.1.3. Հանձնաժողովը:	7.1.3. Комиссия.
7.2. Պատվիրատուի ղեկավարը՝	7.2. Руководитель заказчика:
7.2.1. նշանակում է՝	7.2.1. назначает:
a. գնումները համակարգող,	a. координатора по закупкам,
b. պատասխանատու ստորաբաժանում,	b. ответственное подразделение,

- c. Հանձնաժողով՝ բացառությամբ սույն
Կանոնադրությանը նախատեսված
դեպքերի.
- 7.2.2. բացառությամբ օրենսդրությանը նախա-
տեսված դեպքերի՝
- a. կնքում է պայմանագիրը,
b. հաստատում է գնման ընթացակարգի
արձանագրությունը:
- 7.3. Գնումները համակարգողը՝
- 7.3.1. պատասխանատու է պատվիրատուի՝
գնումների գործընթացի կազմակերպման և
համակարգման համար,
7.3.2. եզրակացություն է տալիս գնումների շրջա-
նակներում պատվիրատուի հաստատած
փաստաթղթերի վերաբերյալ, ապահովում է
գնման ընթացակարգի և դրան առնչվող
փաստաթղթերի համապատասխանությունը
Հայաստանի Հանրապետության օրենսդրու-
թյամբ սահմանված պայմաններին,
7.3.3. իրականացնում է Հանձնաժողովի քարտու-
ղարի լիազորությունները,
7.3.4. կազմում և պատվիրատուի ղեկավարի
հաստատմանն է ներկայացնում տվյալ
գնման ընթացակարգի արձանագրությունը
և պայմանագիրը:
- 7.4. Պատասխանատու ստորաբաժանումը՝
- 7.4.1. կազմում և հաստատում է գնման հայտը,
7.4.2. հետևում է պայմանագրի կողմի (կապալառու,
մատակարար և այլն)՝ պայմանագրով
ստանձնած պարտավորությունների կատար-
ման գործընթացին և դրա արդյունքներով
պատվիրատուի ղեկավարին ներկայացնում է
առաջարկություններ՝ պայմանագրով նախա-
տեսված պատասխանատվության միջոցներ
կիրառելու ուղղությամբ,
7.4.3. ընդունում է պայմանագրի կատարման
արդյունքը,
7.4.4. ներկայացնում է այն անձի (անձանց) թեկ-
նածությունը, որն առաջադրվում է Հանձ-
նաժողովի կազմում ընդգրկվելու նպա-
տակով,
7.4.5. անհրաժեշտության դեպքում առաջարկ է
ներկայացնում գնումների պլանում փոփո-
խություններ և լրացումներ կատարելու
մասին:
- Պատասխանատու ստորաբաժանում կարող են
սահմանվել պատվիրատուի՝
- a. համապատասխան կառուցվածքային ստո-
րաբաժանումը,
- c. Комиссию, за исключением случаев,
предусмотренных настоящим Положе-
нием;
- 7.2.2. за исключением случаев, предусмотренных
законодательством:
- a. заключает договор,
б. утверждает протокол процедуры закуп-
ки.
- 7.3. Координатор закупок:
- 7.3.1. Ответственен за организацию и координа-
цию процесса закупок заказчика,
7.3.2. дает заключение относительно утвержден-
ных заказчиком документов в рамках за-
купок, обеспечивает соответствие проце-
дуры закупки и связанных с ней доку-
ментов условиям, установленным зако-
нодательством Республики Армения,
7.3.3. осуществляет полномочия секретаря Ко-
миссии,
7.3.4. составляет и представляет на утверждение
руководителя заказчика протокол и дого-
вор данной процедуры закупок.
- 7.4. Ответственное подразделение:
- 7.4.1. составляет и утверждает заявку на закупку,
7.4.2. следит за процессом выполнения стороной
договора (подрядчик, поставщик и т.д.)
принятых на себя обязательств по договору
и по его результатам представляет руково-
дителю заказчика предложения для приме-
нения мер ответственности, предусмотрен-
ных договором,
7.4.3. принимает результат выполнения договора,
7.4.4. представляет кандидатуру того лица (лиц),
которая выдвигается с целью включения в
состав Комиссии,
7.4.5. при необходимости представляет предло-
жение о внесении изменений и дополнений
в план закупок.
- Ответственным подразделением заказчика могут
быть признаны:
- a. соответствующее структурное подразделение,

- b. ձևավորած մասնագիտական խումբը, որի կազմում կարող են նաև ընդգրկվել այլ մարմինների կամ կազմակերպությունների ներկայացուցիչներ,
- c. աշխատողը, եթե տվյալ պատվիրատուն չունի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներ:

Պատասխանատու ստորաբաժանման լիազորությունները չեն կարող վերապահվել գնումները համակարգողին:

7.5. Հանձնաժողովը՝

- 7.5.1. հաստատում է գնումների կամ նախատրակավորման հայտարարության և հրավերի տեքստերը,
- 7.5.2. փոփոխություններ է կատարում գնումների հայտարարության և հրավերի կամ նախատրակավորման հայտարարության տեքստերում,
- 7.5.3. պարզաբանումներ է ներկայացնում գնման ընթացակարգի վերաբերյալ,
- 7.5.4. բացում և գնահատում է հայտերը,
- 7.5.5. որոշում է գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին),
- 7.5.6. գնման ընթացակարգը հայտարարում է չկայացած:

Հանձնաժողովի կազմում Հանձնաժողովի անդամի կարգավիճակով չեն կարող ընդգրկվել գնումները համակարգողը, ինչպես նաև վերջինիս ներկայացուցիչը կամ աշխատողը: Հանձնաժողովի անդամը պետք է ունենա մասնակիցների որակավորումը և առաջարկները գնահատելու համար պահանջվող մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է գնման առարկային համապատասխան: Ընդ որում, եթե պատվիրատուի աշխատակազմի ներկայացուցիչները չունեն անհրաժեշտ մասնագիտական կարողություններ, ապա Հանձնաժողովի կազմում ներառելու նպատակով հրավիրվում է համապատասխան փորձագետ (մասնագետ):

8. Գնում կատարելու ընթացակարգերը և կիրառման պայմանները

8.1. Գնում կատարելու ընթացակարգերը.

Սույն կանոնադրությամբ նախատեսված են գնումների հետևյալ եղանակները՝

- 8.1.1. մեկ անձից գնում,
- 8.1.2. գնանշման հարցում,
- 8.1.3. մրցակցային բանակցություններ,
- 8.1.4. մրցույթ:

II. Մեկ անձից գնումներ

9. Կիրառման պայմանները

- b. сформированная специализированная группа, в состав которой могут также быть включены представители других органов или организаций,
- c. работник, если данный заказчик не имеет соответствующие структурные подразделения.

Полномочия ответственного подразделения не могут быть предоставлены координатору закупок.

7.5. Комиссия:

- 7.5.1. утверждает тексты объявления о закупке или предквалификации и приглашения,
- 7.5.2. вносит изменения в объявления о закупках и приглашении или в текстах объявления о предквалификации,
- 7.5.3. представляет разъяснения относительно процедуры закупки,
- 7.5.4. открывает и оценивает заявки,
- 7.5.5. определяет победителя (победителей) процедуры закупки,
- 7.5.6. объявляет несостоявшейся процедуру закупки.

Координатор закупок, а также представитель последнего или сотрудник не могут быть включены в состав Комиссии в статусе члена Комиссии. Член Комиссии должен иметь профессиональную способность, требуемую для оценивания квалификации и предложений участников, которая определяется в соответствии с предметом закупки. Кроме того, если представители персонала заказчика не обладают необходимыми профессиональными навыками, то для включения в состав Комиссии приглашается соответствующий эксперт (специалист).

8. Процедуры осуществления закупки и условия применения

8.1. Процедуры осуществления закупки:

Настоящим Положением предусмотрены следующие способы закупок:

- 8.1.1. закупка у одного лица.
- 8.1.2. запрос на котировку,
- 8.1.3. конкурентные переговоры,
- 8.1.4. конкурс.

II. Закупки у одного лица

9. Условия применения

9.1. Սույն Կանոնադրությամբ և Օրենքով նախատեսված դեպքերում մեկ անձից գնումը կարող է անցկացվել կոնկրետ մատակարարին պայմանագիր կնքելու առաջարկություն ուղարկելու միջոցով կամ մեկ մատակարարից պայմանագիր կնքելու առաջարկության ընդունմամբ, առանց մրցակցող առաջարկների ուսումնասիրության:

9.2. Գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե՝

9.2.1. գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, որը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ,

9.2.2. արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակից ելնելով, գնման այլ ձևերի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր օբյեկտիվորեն կանխատեսել,

9.2.3. պատվիրատուն, որևէ անձից կատարելով ապրանքների գնում, որոշում է սկզբնական պայմանագրում չներառված, սակայն օբյեկտիվորեն չնախատեսված հանգամանքներից ելնելով՝ սկզբնական պայմանագրի կատարման համար անհրաժեշտ դարձած ապրանքների լրացուցիչ գնում կատարել նույն անձից, պայմանով, որ՝

a. լրացուցիչ ապրանքների պայմանագիրը հնարավոր չէ տեխնիկապես կամ տնտեսապես առանձնացնել սկզբնական պայմանագրից՝ առանց պատվիրատուի համար նշանակալի դժվարություն ստեղծելու, և

b. դրա գինը չգերազանցի սկզբնական պայմանագրի ընդհանուր գնի 10 տոկոսը: Ընդ որում, միևնույն անձից սույն ենթակետի կիրառմամբ լրացուցիչ գնում կարող է կատարվել մեկ անգամ, իսկ լրացուցիչ ապրանքների գինը չի կարող սահմանվել ավելի, քան նախատեսված է պայմանագրով,

9.2.4. գնման գինը չի գերազանցում գնումների երկու բազային միավորը:

9.2.5. մրցակցային բանակցությունները ճանաչվել են չկայացած և (կամ) դրանց անցկացումը չի հանգեցրել պայմանագրի կնքմանը:

III. Գնանշման հարցում

9.1. В предусмотренных настоящим Положением и Законом случаях закупка от одного лица может осуществляться путем направления предложения о заключении договора конкретному поставщику, либо принятия предложения о заключении договора от одного поставщика без рассмотрения конкурирующих предложений.

9.2. Закупка может производиться у одного лица, если:

9.2.1. подлежащие закупке товар, работу или услугу возможно приобрести только у одного лица, что обусловлено его авторскими и смежными правами, наличием особого или исключительного права;

9.2.2. вследствие возникновения чрезвычайной или иной непредвиденной ситуации возникло неотложное требование закупки и, исходя из чрезвычайной или иной непредвиденной ситуации, применение других форм закупки с учетом срока невозможно с условием, что такое требование объективно невозможно было предусмотреть;

9.2.3. заказчик, производя закупку товаров у какого-либо лица, решает произвести у того же лица дополнительную закупку товаров, не включенных в первоначальный договор, однако исходя из объективно непредвиденных обстоятельств, ставших необходимыми для выполнения первоначального договора, с условием, что:

a. договор на дополнительные товары технически или экономически невозможно отделить от первоначального договора без создания для заказчика значительных трудностей, и

b. его цена не превышала бы 10 процентов общей цены первоначального договора. При этом дополнительная закупка у одного и того же лица с применением настоящего подпункта может производиться один раз, а цена дополнительных товаров не может быть установлена выше, чем предусмотрено договором;

9.2.4. закупочная цена не превышает две базовой единицы закупок.

9.2.5. конкурентные переговоры были признаны несостоявшимися и (или) их проведение не привело к заключению договора;

III. Запрос котировки

10. Կիրառման պայմանները

- 10.1. Գնումը կատարվում է գնանշման հարցման ձևով, եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի 12-ապատիկը:
- 10.2. Գնանշման հարցման ընթացակարգի կիրառման դեպքում հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետն առնվազն չորս աշխատանքային օր է, որը հաշվարկվում է Ընկերության կայքում գնումների հայտարարության և հրավերի հրապարակման պահից:

IV. Մրցակցային բանակցություններ

11. Ընդհանուր դրույթներ

- 11.1. Մրցակցային բանակցությունները գնումների մրցակցային եղանակ են, որի դեպքում հաղթող է ճանաչվում գնման մասնակիցը, ով առաջարկել է պայմանագրի կատարման պայմանների լավագույն համակցություն և որի վերջնական առաջարկին շնորհվել է առաջին տեղը համաձայն հայտարարված չափանիշների համակարգի:
- 11.2. Գնումը կատարվում է մրցակցային բանակցությունների ձևով, եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի 150-ապատիկը:
- 11.3. Մրցակցային բանակցությունները առնվազն անցկավում են փակ եղանակով՝ հնարավոր մասնակիցների սահմանափակ շրջանակի հետ, որը (նախապես) սահմանվում է Հանձնաժողովի որոշմամբ:
- 11.4. Սույն բաժնի կիրառման դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել, որ մրցակցային բանակցությունները սակարկություններ չեն և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համապատասխան իրավական հետևանքներ չեն առաջացնում:
- 11.5. Բանակցությունների պետք է անցկացվեն մրցակցային բանակցությունների յուրաքանչյուր մասնակցի հետ: Յուրաքանչյուր մասնակցի հետ բանակցությունների կարող են անցկացվել մի քանի անգամ (մի քանի փուլով) ինչպես հերթով, այնպես էլ այլ մասնակիցների հետ բանակցություններից հետո: Բանակցությունների կրում են գաղտնի բնույթ: Չի թույլատրվում այլ մասնակիցներին բացահայտել մասնակիցներից որևիցե մեկի հետ բանակցությունների արդյունքները, բացառությամբ այդ մասնակցի համաձայնության առկայության դեպքում:
- 11.6. Մրցակցային բանակցությունների մասնակիցն իրավունք ունի հրաժարվել դրանում մասնակցությունից: Այդ դեպքում մրցակցային բանակցությունների այդ մասնակցի առաջարկությունը չի կարող լավագույնը ճանաչվել և ենթակա չէ հետագա գնահատման:
- 11.7. Ցանկացած պաշտոնական առաջարկությունները,

10. Условия применения

- 10.1. Закупка производится в форме запроса котировки, если закупочная цена не превышает 12-кратный размер базовой единицы закупок.
- 10.2. В случае применения процедуры запроса котировки предусматриваемый для подачи заявок срок составляет по меньшей мере четыре рабочих дней, который исчисляется со дня опубликовывания объявления о закупках и приглашения к закупкам на сайте Общества.

IV. Конкурентные переговоры

11. Общие положения

- 11.1. Конкурентные переговоры – конкурентный способ закупок, при котором победителем признается участник закупки, предложивший лучшее сочетание условий исполнения договора и окончательному предложению которого было присвоено первое место согласно объявленной системе критериев.
- 11.2. Закупка производится в форме конкурентных переговоров, если закупочная цена не превышает 150-кратный размер базовой единицы закупок.
- 11.3. Конкурентные переговоры проводятся по меньшей мере в закрытой форме: с ограниченным кругом потенциальных участников, который (заранее) определяется решением Комиссии.
- 11.4. При применении настоящего раздела следует учитывать, что конкурентные переговоры не являются торгами и не влекут соответствующих правовых последствий, предусмотренных законодательством РА.
- 11.5. Переговоры должны быть проведены с каждым из участников конкурентных переговоров. Переговоры с каждым из участников могут проходить несколько раз (в несколько раундов) как последовательно, так и после переговоров с другими участниками. Переговоры носят конфиденциальный характер. Не разрешается разглашать другим участникам результаты переговоров с каким-либо из участников за исключением случая, наличия согласия этого участника.
- 11.6. Участник конкурентных переговоров вправе отказаться от участия в них. В этом случае предложение такого участника конкурентных переговоров не может быть признано лучшим и не подлежит дальнейшей оценке.
- 11.7. Любые формальные предложения, которые делают

- որոնք ներկայացվում են մրցակցային բանակցությունների մասնակիցների կողմից, ենթակա են արձանագրման:
- 11.8. Բանակցությունների անցկացման արդյունքներով Պատվիրատուն իրավունք ունի մշակել գնման փաստաթղթերի նոր խմբագրություն՝ հաշվի առնելով մասնակիցներից ստացված առաջարկությունները և նրանցից ստացված տվյալները: Նոր խմբագրությամբ գնման փաստաթղթերի ուղարկվում են մրցակցային բանակցությունների բոլոր մասնակիցներին, իսկ մասնակիցները իրավունք ունեն նախապատրաստել իրանց հայտերի ճշգրտված խմբագրությունները գնման փաստաթղթերով նախատեսված ընդհանուր կարգին համապատասխան:
- 11.9. Անցկացված մրցակցային բանակցությունների արդյունքները ձևակերպվում են Պատվիրատուի կողմից մրցակցային բանակցությունների անցկացման արձանագրություններում, որոնք ստորագրվում են Հանձնաժողովի բոլոր անդամների և մրցակցային բանակցություններում մասնակցած մասնակիցների կողմից: Բանակցությունների յուրաքանչյուր մասնակցի հետ կազմվում է առանձին արձանագրություն:
- 11.10. Անհրաժեշտության դեպքում առանձին նախագծերի դեպքում մրցակցային բանակցությունների անցկացմանը կարող է նախորդել է սույն Կանոնադրության 13 գլխով նախատեսված Գնման գործընթացի նախապատրաստման, ինչպես նաև 14 գլխով նախատեսված Հանձնաժողովի ձևավորման գործընթացը:
- 11.11. Հանձնաժողովի կազմավորմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը հրավիրում է Հանձնաժողովի առաջին նիստը: Նիստի արդյունքում, գնման հայտի հիման վրա, Հանձնաժողովը հաստատում է՝
- 11.11.1. մրցակցային բանակցությունների անցկացման հայտարարության տեքստը,
- 11.11.2. հրավերի տեքստը,
- 11.11.3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:
- 11.12. Մրցակցային բանակցությունների անցկացման մասին հայտարարությունը պարունակում է սույն Կանոնադրության 15.3 կետով նախատեսված տեղեկությունները:
- 11.13. Մրցակցային բանակցություններում մասնակցության հրավերը կարող է պարունակել սույն Կանոնադրության 15.4 և 15.5 կետերով նախատեսված տեղեկությունները, հաշվի առնելով տվյալ գնման գործընթացի առանձնահատկությունները:
- 11.14. Հայտերի ներկայացման ժամկետը առնվազն հինգ օրացուցային օր է:
- Եթե արտակարգ կամ չնախատեսված իրա-
- участники конкурентных переговоров, подлежат протоколированию.
- 11.8. Заказчик по результатам проведения переговоров вправе разработать новую редакцию документации о закупке с учетом поступивших от участников предложений и полученных от них сведений. Закупочная документация в новой редакции направляется всем участникам конкурентных переговоров, а участники вправе подготовить уточненные редакции своих заявок в соответствии с общим порядком, предусмотренным закупочной документацией.
- 11.9. Результаты проведенных конкурентных переговоров оформляются Заказчиком в протоколах проведения конкурентных переговоров, которые подписываются всеми членами Комиссии и принимавшими в конкурентных переговорах участниками. С каждым участником переговоров оформляется отдельный протокол.
- 11.10. При необходимости, в случае отдельных проектов, проведению конкурентных переговоров может предшествовать процедура Подготовки процесса закупки, предусмотренная главой 13, а также процедура формирования Комиссии, предусмотренная главой 14 настоящего Положения.
- 11.11. В течение трех рабочих дней, следующих за формированием Комиссии, секретарь созывает первое заседание Комиссии. В результате заседания, на основании заявки на закупки, Комиссия утверждает:
- 11.11.1. текст объявления проведения конкурентных переговоров,
- 11.11.2. текст приглашения,
- 11.11.3. день, время и место проведения следующего заседания Комиссии.
- 11.12. Объявление о проведении конкурентных переговоров содержит сведения, предусмотренные пунктом 15.3 настоящего Положения.
- 11.13. Приглашение на участие в конкурентных переговорах может содержать сведения, предусмотренные пунктами 15.4 и 15.5 настоящего Положения, с учетом особенностей данной процедуры закупок.
- 11.14. Срок подачи заявок составляет не менее пяти календарных дней.
- Если вследствие возникновения чрезвычайной

- վիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ, և հայտերի ներկայացման համար սույն կետով նախատեսված ժամկետի կիրառումն անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր օբյեկտիվորեն կանխատեսել, ապա հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետը առնվազն երեք օրացուցային օր է:
- 11.15. Հայտերը ներկայացվում են սույն կանոնադրության 17 բաժնով նախատեսված կարգով
- 11.16. Եթե մրցակցային բանակցությունների հայտերի ներկայացման ժամկետի ավարտի պատվիրատուի կողմից ստացվել է մրցակցային բանակցություններում մասնակցության միայն մեկ հայտ կամ ոչ մի հայտ չի ստացվել, մրցակցային բանակցությունները կճանաչվեն չկայացած:
- 11.17. Մրցակցային բանակցությունները չկայացած ճանաչվելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի որոշում ընդունել կրկնակի գնման անցկացման վերաբերյալ՝ ընդ որում պայմանագրի կատարման պայմանները կարող են փոփոխվել:
- 11.18. Հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:
- 11.19. Մրցակցային բանակցություններին մասնակցության հայտերի բացման նիստում Հանձնաժողովը ստուգում է՝
- a. հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին
 - b. բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին:
 - c. մասնակիցների համապատասխանությունը փաստաթղթերի պահանջներին
- 11.20. Հանձնաժողովը իրավունք ունի մերժել մասնակցի հայտը հետևյալ դեպքերից մեկի դեպքում՝
- 11.20.1. մասնակցության հայտի առարկայի անհամապատասխանությունը գնման մասին հայտարարության մեջ/հրավերում նշված գնման առարկային
 - 11.20.2. հայտում նշված գնի գերազանցում գնման մասին փաստաթղթերում նշված գնման սկզբնական (առավելագույն) գնից
 - 11.20.3. գնման մասին փաստաթղթերով սահմանված փաստաթղթերից մեկի բացակայություն
 - 11.20.4. գնման մասնակցի կողմից հայտի կազմում
- или непредвиденной ситуации возникло неотложное требование закупки и применение предусмотренного настоящим пунктом срока для подачи заявок невозможно с условием, что такое требование невозможно было предусмотреть объективно, то срок, предусматриваемый для подачи заявок, составляет не менее трех календарных дней.
- 11.15. Заявки представляются в порядке, установленном разделом 17 настоящего Положения.
- 11.16. Если по окончании срока подачи заявок конкурентных переговоров, Заказчиком получена только одна заявка на участие в конкурентных переговорах, или не будет получено ни одной заявки, конкурентные переговоры будут признаны несостоявшимися.
- 11.17. В случае признания конкурентных переговоров несостоявшимися Заказчик вправе принять решение о проведении повторной закупки, при этом условия исполнения договора могут быть изменены.
- 11.18. Заявки вскрываются в указанный в приглашении день, час и месте – на заседании по вскрытию заявок. День и час вскрытия заявок должны совпадать с крайним сроком их подачи.
- 11.19. На заседании по вскрытию заявок для участия в конкурентных переговорах Комиссия проверяет:
- a. соответствие составления и представления конвертов, содержащих заявки, установленному порядку,
 - b. наличие требуемых (предусмотренных) документов в каждом открытом конверте и соответствие их составления реквизитам, установленным приглашением.
 - c. соответствие участников требованиям документации.
- 11.20. Комиссия вправе отклонить заявку участника в одном из следующих случаев:
- 11.20.1. несоответствия предмета заявки на участие предмету закупки, указанному в объявлении/приглашении к закупке;
 - 11.20.2. превышения цены, указанной в заявке начальной (максимальной) цены закупки, указанной в документации о закупке;
 - 11.20.3. отсутствия одного из документов, определенных документацией о закупке;
 - 11.20.4. несоблюдения участником закупки требо-

- ուղարկված փաստաթղթերի կազմմանը ներկայացվող պահանջների չպահպանում
- 11.20.5. ստուգման ընթացքում Հանձնաժողովի կողմից բացահայտված գնման մասնակցի մասին ոչ հավաստի տեղեկությունների առկայություն ներկայացված փաստաթղթերում
- 11.20.6. սույն կանոնադրության 4.3 կետով նախատեսված դեպքերում,
- 11.20.7. Հանձնաժողովում մասնակցին փոխկապակցված անձի առկայություն
- 11.20.8. հայտի ապահովումն հաստատող փաստաթղթի բացակայություն, եթե նման պահանջ սահմանված է գնման մասին փաստաթղթերով
- 11.20.9. արտադրական, տեխնիկական, առևտրային և պայմանագրային պահանջներին մասնակցի կողմից ներկայացված հայտի համապատասխանում,
- 11.21. Հայտերը բազմելուց հետո կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են Հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Արձանագրությունը պարունակում է՝
- 11.21.1. տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին,
- 11.21.2. հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները,
- 11.21.3. տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին,
- 11.21.4. տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին,
- 11.21.5. տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին,
- 11.21.6. յուրաքանչյուր մասնակցի առաջարկված գինը,
- 11.21.7. մրցակցային բանակցություններին մասնակցելու իրավունք ստացած մասնակիցների անվանումները
- 11.21.8. մրցակցային բանակցությունների անցկացման վայրը, օրը և ժամը,
- 11.21.9. գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորումը,
- 11.22. Բոլոր հայտերի մերժման դեպքում մրցակցային բանակցությունները ճանաչվում են չկայացած:
- 11.23. Մրցակցային բանակցությունները չկայացած ճանաչվում են անվավեր, եթե մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում կան սխալներ, որոնք վերաբերում են հայտի պահանջներին, որոնք հակասում են հայտի պայմանագրային պահանջներին, կամ հայտի պայմանագրային պահանջներին համապատասխանում:
- 11.20.5. наличия в представленных документах недостоверных сведений об участнике закупки, выявленных Комиссией при проверке;
- 11.20.6. в случаях, предусмотренных пунктом 4.3 настоящего Положения;
- 11.20.7. наличия в Комиссии аффилированных лиц участника;
- 11.20.8. отсутствия документа, подтверждающего обеспечение заявки, если такое требование установлено документацией о закупке;
- 11.20.9. не соответствие поданной участником заявка производственным, техническим, коммерческим или договорным требованиям;
- 11.21. После вскрытия заявок составляется протокол, который прилагается к протоколу процедуры закупки. Протокол подписывают члены, присутствующие на заседании Комиссии. Протокол содержит:
- 11.21.1. сведения о месте, дне и часе вскрытия заявок,
- 11.21.2. наименования (имена) и адреса участников, подавших заявки,
- 11.21.3. данные о соответствии составления и представления конвертов требованиям приглашения,
- 11.21.4. данные о наличии в каждом вскрытом конверте истребованных приглашением документов,
- 11.21.5. данные о соответствии составления представленных каждым участником документов условиям, установленным приглашением,
- 11.21.6. цену, предложенную каждым участником,
- 11.21.7. наименования участников, получивших право на участие в конкурентных переговорах,
- 11.21.8. место, день и час проведения конкурентных переговоров,
- 11.21.9. обоснование - в случае объявления процедуры закупки несостоявшейся,
- 11.22. В случае отклонения всех заявок конкурентные переговоры признаются несостоявшимися.
- 11.23. Во всех случаях признания конкурентных пере-

նաչելու բոլոր դեպքերում պատվիրատուն իրավունք ունի պայմանագիր կնքել միակ մատակարարի (կապալառուի, կատարողի) հետ սույն Կանոնադրության 9.2.5 ենթակետին համապատասխան:

11.24. Մասնակիցների հետ, ովքեր հայտերի ուսումնասիրման արդյունքներով թույլատրվել են մրցակցային բանակցություններին մասնակցելուն, բանակցություններն անցկացվում են սույն Կանոնադրության 11.5-11.9 կետերով նախատեսված կարգով:

V. Մրցույթ

12. Մրցույթի անցկացման կարգը

12.1. Ընդհանուր դրույթներ

12.1.1. Գնումը կատարվում է մրցույթի ձևով, եթե գնման գինը գերազանցում է գնումների բազային միավորի 150-ապատիկը:

12.1.2. Կախված փուլերի քանակից՝ մրցույթը կարող է անցկացվել մեկ կամ երկու փուլով:

12.1.3. Կախված նախնական որակավորման ընտրության ընթացակարգերի առկայությունից մրցույթը կարող է անցկացվել նախատրակավորման ընթացակարգով կամ առանց դրա:

12.2. Մրցույթի կիրառման պայմանները.

12.2.1. Մրցույթի դեպքում հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետը հաշվարկվում է գնումների հայտարարությունը և հրավերը Ընկերության կայքում հրապարակելու օրվանից:

12.2.2. Հայտերի ներկայացման ժամկետը առնվազն հինգ օրացուցային օր է:

Եթե արտակարգ կամ չնախատեսված իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ, և հայտերի ներկայացման համար սույն կետով նախատեսված ժամկետի կիրառումն անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր օբյեկտիվորեն կանխատեսել, ապա հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետը առնվազն երեք օրացուցային օր է:

12.3. Երկու փուլով մրցույթի կիրառման պայմանները

12.3.1. Մրցույթը կարող է կատարվել երկու փուլով՝

a. եթե Պատվիրատուն ճշգրիտ (օբյեկտիվորեն) չի կարող սահմանել գնման առարկայի բնութագրերը,

b. եթե Պատվիրատուն հնարավորություն է տալիս մասնակիցներին ներկայացնել գնման առարկայի հնարավոր բնութագրերի վերաբերյալ այլընտրանքային առա-

ջակարգով անհետաձգելի պահանջի դեպքում հայտերի ներկայացման համար սույն կետով նախատեսված ժամկետի կիրառումն անհնար է, ապա հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետը առնվազն երեք օրացուցային օր է:

